ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

«7» դեկտեմբերի 2023թ. No 25/1-Գ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«Բևեռային ուղի» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ

Գնման ընթացակարգի ծածկագիր՝ **ՀՀՊԵԿ-ԳՀԾՁԲ-23/8**

Մասնակից ՝ **«Բևեռային ուղի» ՍՊԸ**
/ՀՎՀՀ՝ 02228306, գործունեության հասցե՝ ք. Երևան, Բագրատունյաց 27/

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար ֆաքսիմիլային սարքերի վերանորոգման և պահպանման ծառայությունների ձեռքբերման նպատակով 19.10.2023թ. հայտարարվել է ՀՀՊԵԿ-ԳՀԾՁԲ-23/8 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը, որին հայտ է ներկայացրել նաև «Բևեռային ուղի» ՍՊԸ-ն: Գնահատող հանձնաժողովը 27.10.2023թ.-ին կայացած նիստում «Բևեռային ուղի» ՍՊԸ-ին ճանաչել է որպես ընտրված մասնակից և անգործության ժամկետի ավարտից հետո սահմանված կարգով 15.11.2023թ-ին մասնակցին ներկայացրել է ՀՀՊԵԿ-ԳՀԾՁԲ-23/8 ծածկագրով պայմանագրի նախագիծը: Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված ժամկետում «Բևեռային ուղի» ՍՊԸ-ն պայմանագիրը չի ներկայացրել:

23.11.2023թ. թիվ 3 որոշմամբ հանձնաժողովի անդամների կողմից իրականացրած գնահատման արդյունքում հանձանաժողովը որոշել է զրկել «Բևեռային ուղի» ՍՊԸ-ին պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

1. Եզրահանգում

Վերոնշյալ կարգավորումների համատեքստում անդրադառնալով առկա փաստական հանգամանքներին՝ պետք է արձանագրել, որ ի հակադրություն հրավերի պահանջներին՝ որպես գնման գործընթացի մասնակից հանդես եկած «Բևեռային ուղի» ՍՊԸ-ն՝ չներկայացնելով հրավերով

սահմանված փաստաթղթերը, խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է Պատվիրատուի կողմից գնման գործընթացին «Բևեռային ուղի» ՍՊԸ-ի հետագա մասնակցության դադարեցմանը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, այն է՝ Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա, որոշում եմ **«Բևեռային ուղի» ՍՊԸ-ին** ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

ԷԴԳԱՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ